Արձանագրություն N 2
ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/10 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/h 19տնտ.

30 մարտի 2017թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ (ԳԱՊ)՝ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Աշոտ Ավետիսյան |
| (ԳԱ)՝ | Դավիթ Գրիգորյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | Ջուլիետ Համբարձումյան |
| | Լիլիթ Մաղդեսյան |
| քարտուղար՝ (ՄՀԺ) | Հայկ Խաչատրյան |

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝

| Հ/հ | Անվանումը | Նախահաշվային գները /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Դյուրակիր համակարգիչ | 1,860,000 |
| 2 | Ձայնագրիչ, ձայնագրելու և վերարտադրելու հնարավորությամբ | 70,000 |
| 3 | Տվյալների կրիչ | 148,000 |

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 30.03.2017թ.-ի ժ 10:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

| N | Մասնակից | Հասցե |
|---|---|---|
| 1 | ՍԵԳ ՍՊԸ | ք. Երևան, Սարկավագի փ. 72/2 |
| 2 | Սոֆթլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ | ք. Երևան, Հ. Էմին 123 |
| 3 | ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 18/2 |
| 4 | «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ | ք. Երևան, Նաիրի Զարյան 22ա |

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները.

ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/

| Հ/հ | Անվանումը | Մասնակցի անվանումը և գնի առաջարկը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՍԵԳ ՍՊԸ | Սոֆթլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ | ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ | Էդվարդ Քոմփյութերս ՍՊԸ |
| 1 | Դյուրակիր համակարգիչ | 1,950,000 | 1,884,900 | 1,948,800 | --- |
| 2 | Ձայնագրիչ, ձայնագրելու և վերարտադրելու հնարավորությամբ | 75,000 | --- | --- | 70,000 |
| 3 | Տվյալների կրիչ | 154,000 | --- | --- | 120,583 |

<u>Մասնակիցների հայտերի գնահատում</u>

<<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի.

- հայտը միայն 1-ին չափաբաժնի մասով կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան.
- մասնակցի ներկայացրած փաստաթղթերը կազմված չեն հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, այն է՝ փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (մասնակիցները հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և համաձայն հրավերի 1-ին մասի 7.9 կետի՝ փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ), ինչպես նաև ընթացակարգին մասնակցելու դիմումներում առկա են անհամապատասխանություններ (նշված են չափաբաժինների համարներ, սակայն դրանց մասով հայտեր ներկայացված չեն).
- գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից հայտերը գնահատվել են անբավարար:

<<ՍԵԳ>>, <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> և <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ների.

- հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն առկա են.
- Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից հայտերը գնահատվել են բավարար՝ բացառությամբ գնային պայմանները (<<ՍԵԳ>> և <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ-ների բոլոր գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները):

Ոչ մի մասնակից հայտը հետ չի կանչել և չի փոփոխել:

<u>Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին</u>

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. <<Սոֆթլայն Ինթերնեյշնլ>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/10 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ծանուցել 1-ին չափաբաժնի մասով բավարար գնահատված բոլոր Մասնակիցներին՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին որոշելու նպատակով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին՝ հայտնելով դրա վարման օրվա, ժամի և վայրի մասին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն ու գների նվազեցման շուրջ բանակցություններն անցկացնել նույն վայրում՝ 04.04.2017թ.-ի ժամը 12:00-ին: Բանակցությունների համար սահմանել ժամկետ՝ 20 րոպե:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ ________ Արոտ Գրիգորյան

գնահատող անդամ (ԳԱ)՝ ________ Աշոտ Ավետիսյան

(ԳԱ)՝ ________ Դավիթ Գրիգորյան

բացող անդամներ (ԲԱ)՝ ________ Ջուլիետ Համբարձումյան

(ԲԱ)՝ ________ Լիլիթ Մաղդեսյան

քարտուղար՝ (ՄՀՄ) ________ Հայկ Խաչատրյան